«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի

պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու,

դոցենտ, ոստիկանության գնդապետ

_____ Գ. Թ. Գրիգորյան

« »_____ 2019 թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՄԲԻՈՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019-2020 ուստարի

Ամբիոնի անվանումը՝ Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի
Ամբիոնի պետի պարտականությունների
կատարող՝ ոտիկանության փոխգնդապետ Ա. Սաֆարյան

1.Ընդհանուր տեղեկություններ ամբիոնի դասախոսական կազմի վերաբերյալ

Համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հաստիքացուցակի՝ ամբիոնին հատկացված են հետևյալ հաստիքները՝
Ամբիոնի պետ – 1,
Դոցենտ – 2,
Ավագ դասախոս – 1,
Դասախոս – 1,
Ուսումնական ասիստենտ – 1:
Ընդամենը՝ 6 հաստիք:
Ներկա պահին ամբիոնը համալրված է՝
Ամբիոնի պետ – 0,
Դոցենտ – 1,
Ավագ դասախոս – 1,
Դասախոս – 1,
Ուսումնական ասիստենտ – 0,
Համատեղման կարգով դասախոս – 6, Ռ. Մարանդյան, Մ. Մանուկյան, Գ. Խուդոյան, Ա. Մարգարյան, Ա. Ադամյան, Վ. Սայադյան
Պայմանագրային հիմունքներով դասախոս – 4՝ Է. Չիբուխչյան, Գ. Առաքելյան, Ա. Սարգսյան, Ռ. Սահակյան

2.Ընդհանուր տեղեկություն ամբիոնում դասավանդվող առարկաների մասին

Համաձայն կրթահամալիրի ուսումնական պլանների՝ ամբիոնի առարկայացանկում հաշվետու ժամանակաշրջանում ընդգրկված են եղել և դասավանդվել են հետևյալ առարկաները, մագիստրոսական դասընթացները և մոդուլները՝

1. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն,
2. Պետության և իրավունքի տեսություն,
3. Պետության և իրավունքի տեսության հիմունքներ,
4. Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք,
5. ՀՀ սահմանադրական իրավունք,
6. Քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն,
7. Հայաստանի պետության և իրավունքի պատմություն,
8. Միջազգային իրավունք,
9. ՀՀ մունիցիպալ իրավունք,
10. Եվրոպական իրավունք,

11. Մարդու իրավունքները և ոստիկանությունը,
12. Իրավունքի տեսության հիմնահարցեր,
13. ՀՀ սահմանադրական արդարադատությունը,
14. Մարդու իրավունքների տեսության հիմնահարցեր,
15. Հայաստանի ոստիկանության պատմություն,
16. Մարդու իրավունքների հիմունքներ,
17. Իրավագիտության հիմունքներ,
18. Պետական կառավարման սահմանադրական հիմունքներ,
19. Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովումը ոստիկանության գործունեության մեջ:

Բոլոր առարկաները ապահովված են եղել ամբիոնի հաստիքային, համատեղման կարգով և պայմանագրային հիմունքներով դասավանդող դասախոսներով:

3.Տեղեկություն ամբիոնի դասախոսների անհատական ծանրաբեռնվածության վերաբերյալ

2019-2020 ուս.տարում պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնն ունի 5071 ժամ, որից՝

1. Ռ.Մարանդյան 507 ժամ,
2. Հ. Քոչարյան 49 ժամ,
3. Ա.Սաֆարյան 739 ժամ,
4. Մ.Մանուկյան 504 ժամ,
5. Ա. Մարգարյան 583 ժամ,
6. Մ. Մուրադյան 230 ժամ,
7. Է. Չիբուխչյան 895 ժամ,
8. Գ. Առաքելյան 586 ժամ,
9. Գ. Խուդոյան 95 ժամ,
10. Վ. Սայադյան 49 ժամ,
11. Ա. Սարգսյան 57 ժամ
12. Ռ. Սահակյան 211 ժամ,
13. Գ. Դանիելյան 50 ժամ,
14. Ա. Ադամյան 504 ժամ,
15. Լ. Գրիգորյան 2 ժամ,
16. Լ. Մանուկյան 6 ժամ,
17. Ա. Բագրատյան 4 ժամ :

4. Հաշվետու տվյալներ պլանավորված ուսումնական ծանրաբեռնվածության և դրա փաստացի կատարման վերաբերյալ

2019-2020 ուս. տարում ամբիոնի առարկաների գծով պլանավորված ողջ ծանրաբեռնվածությունը (5071 ժամ) դասախոսների կողմից կատարված է առանց թերացման՝ հիմք ընդունելով դասացուցակը: Պարբերաբար (ամիսը մեկ անգամ) վերահսկվել է լսարանային ժամաքանակների փաստացի կատարումը և տեղեկանքի ձևով ներկայացվել ուս. բաժին (կատարող՝ Ա. Սաֆարյան):

5. Հաշվետու տվյալներ պլանավորված ուսումնամեթոդական աշխատանքների և դրանց փաստացի կատարման վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են թե ամբիոնի, թե դասախոսների անհատական աշխատանքային պլաններով նախատեսված ուսումնամեթոդական բոլոր աշխատանքները: Մասնավորապես՝

1. Կազմվել և ամբիոնի նիստում հաստատման է ներկայացվել ամբիոնի աշխատանքային պլանը:
2. Կազմակերպվել և անցկացվել են ընթացիկ և նախաքննական կոնսուլտացիաներ:
3. Որոշ առարկաների գծով լրամշակվել են դասախոսությունների ֆոնդերը:

4. Կազմվել, ամբիոնի նիստերում քննարկվել և հաստատվել են քննությունների և ստուգարքների հարցաշարերը, քննական և ստուգարքային տոմսերը՝ ամբիոնի դասախոսական կազմի կողմից դասավանդվող առարկաներով (մոդուլներով):
5. Ամբիոնը ընդգրկված է եղել ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար ուսուցման 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերի, ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի, ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա վճարովի ուսուցման 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի անցկացմանը:
6. Կազմակերպվել և անցկացվել են վերահսկողական դասալսումները:

6.Հաշվետու տվյալներ պլանավորված գիտահետազոտական աշխատանքների և դրանց փաստացի կատարման վերաբերյալ

1. Ա. Սաֆարյանը հրապարակել է «Հավաքների ազատության իրավունքը հիմնարար այլ իրավունքների իրացման համատեքստում» խորագրով գիտական հոդված «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրում, Երևան, 2019, N 08, էջեր 52-61:
2. Ա. Սաֆարյանը հրապարակել է «Значение преподавания дисциплины «Права человека и полиция» в процессе подготовки кадров полиции» խորագրով գիտական հոդված, Минск, 2020г. Тезисы докладов. Международная научно-практическая конференция проблемы борьбы с преступностью и подготовки кадров для правоохранительных органов.
3. Ռ. Մարանդյանը և Ա. Սաֆարյանը մասնակցել են «Հավաքների ազատության օրենսդրական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» անվանումով ուսումնական ֆիլմի ստեղծման աշխատանքներին:
4. Մ. Մուրադյանը հրապարակել է «Սուբյեկտիվ իրավունքի չարաշահման հիմնախնդիրը հռոմեական իրավունքում» խորագրով գիտական հոդված // «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2019, N 08, էջեր 42-51:
5. Ա. Սաֆարյանը «Значение преподавания дисциплины «Права человека и полиция» в процессе подготовки кадров полиции» զեկույցով մասնակցել է գիտագործնական կոնֆերանսի «Проблемы борьбы с преступностью и подготовки кадров для правоохранительных органов»:
6. Մ. Մանուկյանը «Роль авторитета в процессе преподавания» զեկույցով մասնակցել է գիտագործնական կոնֆերանսի «Фундаментальная и прикладная наука: состояние и тенденция развития» :
7. Մ. Մանուկյանը հրապարակել է «Роль авторитета в процессе преподавания» խորագրով գիտական հոդված //«Фундаментальная и прикладная наука:состояние и тенденция развития». /Петрозаводск, 2020, էջեր 58-61/:
8. Ա. Սաֆարյանը հրապարակել է «Հավաքի կազմակերպչի պատասխանատվության հիմնահարցերը» խորագրով գիտական հոդված «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրում, Երևան, 2020, N 09, էջեր 186-196:
9. Մ. Մանուկյանը «Паспорт как правовой документ в Песпублике Армения» զեկույցով մասնակցել է գիտագործնական կոնֆերանսի Актуальные вопросы науки и практики» АВН-22 :
10. Մ. Մանուկյանը հրապարակել է «Паспорт как правовой документ в Песпублике Армения» խորագրով գիտական հոդված Сборник научных трудов по материалам XXII Международной научно-практической конференции /Анапа, 2020 էջեր 33-40:
11. Ա. Սաֆարյանը պատրաստել է առաջատար կազմակերպության կարծիք Հայ-ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության թիվ 063 մասնագիտական խորհրդում պաշտպանության ներկայացված՝ Հ. Ա. Ծատուրյանի՝ «Խորհրդարանի սահմանադրական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

7.Տեղեկություններ դաստիարակչական, կազմակերպչական և այլ աշխատանքների վերաբերյալ

1. Ամբիոնի դասախոսներն ամենօրյա աշխատանքներ են կատարել սովորողների դաստիարակչական հարցերով:
2. Ամբիոնին կից գործել է «Պետաիրավական առարկաների գիտական խմբակ»-ը, որը ուստարվա ընթացքում անցացրել է 6 նիստ՝ համաձայն նախապես հաստատված պլանի:

8.Տեղեկություն ամբիոնում գործող բոլոր մատյանների գրանցումների վերաբերյալ

Ամբիոնում գործում են հետևյալ մատյանները.
ա) ամբիոնի նախաքննական կոնսուլտացիաների,
բ) ուսումնական պարապմունքների հսկողության,
գ) ամբիոնի նիստերի արձանագրությունների:

1.Ամբիոնի նախաքննական կոնսուլտացիաների մատյանում գրանցվել են ամբիոնի դասախոսների կողմից անցկացված կոնսուլտացիաները:
2. Երկու կիսամյակների ընթացքում անցկացվել են ամբիոնի թվով 14 նիստեր, որոնց ընթացքում առաջ են քաշվել և քննարկվել կիսամյակի ընթացքում առաջացած կարևոր հարցերը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
պետության և իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի պետի պարտականությունների
կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Գ. Սաֆարյան

21.07.2020 թ.